ցոյցներ դոյա վաշխառութեան, դ) ովքեր են այն մութ ոյժերը, որոնք մուտք են գործել «Լումայի» մէջ և վերջապէս փաստերով ապացուցանել թէ ինչով են դոքա «մութ ոյժեր»։

---

## ՄԻ ՄԻՋԱԴԷՊԻ ԱՌԻԹՈՎ

Անցեալ տարի Բագու քաղաքում տեղի ունեցաւ մի միջադէպ, որ առիթ տուեց երկար խօսակցութիւնների և լրագրական յօդուածների։

Երդուեալ հաւատարմատար պ. Գ. Ենգիբարեանն երկար տարիներ կառավարում էր Բագուի հարուստներից մէկի պ. Մ. Շահգիլդանեանի միլլիոնային գործերը։ Պ. Շահգիլդանեանի գործերը մինչև պ. Ենգիբարեանի կառավարիչ հրաւիրուելը այնպիսի խառն ի խուռն դրութեան մէջ է եղել որ ոչ մի կառավարիչ չէր կարող նրանց կարգի բերել։ Պ. Ենգիբարեանի գլխաւոր ջանքն է եղել ազատել պ. Շահգիլդանեանին վերջնական սնանկութիւնից և մի կերպ գոհացում է տալիս նրա պարտատէրերին տարիներ շարունակ։ Պ. Շահգիլդանեանը գոհ է եղել նրանից և այնչափ, որ երբ պ. Ենգիբարեանը մի քանի անգամ թողնում է իւր պաշտօնը, խնդրում է և համոզում նրան նորից յանձն առնել իւր գործերը։ Վերջապէս, անցեալ տարուայ յունուարին կառավարիչը հրաժարւում է իւր պաշտօնից և պահանջում պ. Շահգիլդանեանից իւր ստանալիքը մուրհակով։

Պ. Շահգիլդանեանը դրդւում է և մի երեկոյ Բագուի ժողովարանի դահլիճում մի խումբ մարդկանց ներկայութեամբ վիրաւորական խօսքեր է ասում նրան։ Պ. Ենգիբարեան դիմում է դատարանին։ Գործը հաշտարար դատարանից անցնում է նահանգականը։ Պ. Շահգիլդանեանի դստեր փեսացու երդ. հաւատ. պ. Պապաջանեանն, իբրև վկայ, թոյլ է տալիս իրան հակառակորդի բացակայութեամբ մի քանի մեղադրանքներ բարդել պ. Ենգիբարեանի վրայ։ Գլխաւոր մեղադրանքն այն է լինում, թէ իբր պ. Ենգիբարեանը պ. Շահգիլդանեանի գործերը վարելիս իբրև կառավարիչ գործել է ինչ ինչ եղծումներ։

Դատարանը պ. Շահգիլդանեանին ենթարկում է 10 օրեայ բանտարկութեան։ Բայց պ. Ենգիբարեանը իւր պատիւը վիրաւորուած է համարում պ. Պապաջանեանի ցուցմունքով և բացատրութիւն է պահանջում։ Նա առաջարկում է պատուի դատ։ Սրանք, երկար ժամանակ մերժում են և, վերջապէս պ. Մարկոս Դոլուխանեանի միջամտութեան շնորհիւ ստիպուած են լինում ընդունել։

Պատուի դատարանի անդամներ հրաւիրւում են Թիֆլիսի նախկին նահանգապետ Բըկով, Ռօզինլզի կառավարիչ Ֆէյգլ

Արդ. հաւատ. Վօնտովիչ և հայ ինժիններներ Վ.աչեան ու Պարոնեան։ Նրանք 14 նիստերում գործը քննում են և վճիռագնում։

Հետաքրքրական չեն մեզ համար այս վճռի մանրամասնութիւնները։ Հետաքրքրական է նրա բարոյական կողմը։ Ահա ինչ է ասում պատուի դատաստանը պ. Ենգիբարեանի մասին. «Ենգիբարեանի գործունէութեան մէջ դատաստանը չնկատեց եղծումների նշոյլ անգամ»։

Մեզ թւում է, որ պ. Ենգիբարեանը միանգամայն գոհ պիտի լինի հասարակական մի մարմնի—պատուոյ դատաստանի վճռով։ Գալով մի քանի լրագիրների չափազանց եզրակացութիւններին, չը պիտի նրանց վրայ ուշադրութիւն դարձնել և մի հասարակ միջադէպ հասարակական խնդիր դարձնել։

Մենք խօսեցինք այս միջնադէպի մասին նախ այն պատճառով, որ նրա մասին լրագիրները ամբողջ տարի գրեցին և երկրորդ, որ պ. Ենգիբարեանը հայ գրականութեան մշակներից մէկն է։ Նա «Արձագանքի» շնորքով աշխատակիցներից մէկն էր և նախկին դասատու Ներսիսեան դպրոցում։

---

## ԽԼՐՏՈՒԱԾ ՃԱՀԻՃԸ

Նետս դիպաւ նշան դրած տեղին։ Քարս ընկաւ ուղիղ ճահճի կենտրոնը—«Մշակի» սիրտը։ Գորտերը գլուխ են բարձրացրել և գրգռոցը սկսուել է։

Անցեալ համարում տպուած իմ «Ներկայ հայ մամուլ» վերնագրով յօդուածը թոյն է թափել հէնց այն մարդկանց կոկորդը, որոնց դէմ իսկապէս ուղղուած էր։ Եւ այդ խեղդուող կոկորդներից մէկը «Մշակի» № 16-ում ժայթքում է իմ դէմ $3^{1}/_{2}$ սիւնակ լիշոցներ։ Ընթերցող, թաշկինակդ պահիր քթիդ, ես պիտի առաջ բերեմ այդ լիշոցների մի մասը։ Ահա այդ ժամանակակից մարգարէները. «Սուտ ասող Մենաւոր, ամօթ քեզ, խղճալի Մենաւոր, պապանձուես դու, դժոխքի ծնունդ, չար լեզու, տրաքուում ես, ով խեղճ, տապակուող անկարողութիւն, դժբախտ, անպարտաւան, մեծամիտ, երկինքը քեզ շնորք չէ տուել, թշուառ, քաշքշուկ, գռնէ դուռն ընկած անկարողութիւն» և այլն և այլն։

Այս գեղարուեստական տողերի հեղինակն ինձ է անուանում լիշոցարան։ Նա ինձ անուանում է «պատի ծակերից խօսող», որովհետև յօդուածս ստորագրել եմ կեղծ անունով, իսկ ինքն իր մարգարտաշար տողերը ստորագրելու փոքրիկ համարձակութիւնն անգամ չէ ունեցել։ Բայց ես ճանաչում